

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 3-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետին է այցելում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Հովսեփի Պարսամյանը՝ ընկերակցությամբ նույն խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանի:

Վեհափառ Հայրապետը ողջունում և հաջողություն է մաղթում պրն. Ռուբեն Պարսամյանին նրա նոր պաշտոնավարության գործի ճանապարհին:

Ապա Վեհափառ Հայրապետի, պրն. Ռ. Պարսամյանի և պրն. Ա. Հասրաթյանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

* *
*

Սեպտեմբերի 7-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը փոխադարձ այցելություն է տալիս Երևանում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանին՝ մի անգամ ևս շնորհավորելով նրան իր նոր պաշտոնի մեջ՝ նրա հայրենանվեր աշխատանքների ճանապարհի վրա:

Ջերմ զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Անդրանիկ Հասրաթյանը:

Հայոց Հայրապետը և հարգելի պրն. նախագահը ճառեր են փոխանակում:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պրն. Արթուն Հատիտյանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ, ԽԱՉՔԱՐԻ ԱՌԱՋ

(Նկար՝ Արա Կյուլսերի. Ստամբուլ)